ՆՊԱՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱԱ – 3

ք. Երևան **«14» հունվարի 2020թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար **Նարեկ Ղազարյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր **Սերգեյ Առաքելյանի** (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի առարկան է՝

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով՝ «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների տրամադրումը՝ 44446.0 հազար դրամ (քառասունչորս միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար) «Կազմակերպությանը»՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից հաստատված ծրագրերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի կողմից որակավորման ստուգման արդյունքներով դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում իրականացնելու նպատակով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Պահանջելու Կազմակերպությունից ներկայացնել ամսական կտրվածքով հաշվետվություն՝ իր կողմից իրականացված գործունեության վերաբերյալ,

2.1.2. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ստուգել կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունները, գումարների նպատակային օգտագործումը և թերություններ հայտնաբերելիս այդ մասին տեղյակ պահել կազմակերպությանը:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1.պետական մարմնից պահանջել փոխանցելու Հայաստանի Հանրապետության Արդարադատության ակադեմիային փոխանցման ենթակա գումարները:

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով Կազմակերպության բանկային հաշվին փոխանցել նախատեսված գումարները:

2.3.2. անհրաժեշտության դեպքում աջակցել Կազմակերպությանը.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1.պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով կամ սույն պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.

2.4.2. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. հաշվետվությունները Պետական մարմին ներկայացնել յուրաքանչյուր ամսվա վերաբերյալ մինչև հաջորդ ամսվա 10-ը ներառյալ, իսկ եթե այդ օրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ աշխատանքային օր է, ապա այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը ներառյալ, իսկ ծրագրի ավարտից հետո ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

3. Նպաստի տրամադրման կարգը և ժամկետները

3.1. Նպաստը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրով նախատեսված միջոցներից: Գումարի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով: Գումարները հատկացվում են Կազմակերպության բանկային հաշվին փոխանցելու միջոցով և այն կարող է փոխվել յուրաքանչյուր տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցների չափից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լրացուցիչ հատկացման միջոցների չափով:

3.2. Յուրաքանչյուր ամիս գումարը Կազմակերպության հաշվին է փոխանցվում նախորդ ամսվա փոխանցված գումարի վերաբերյալ Պետական մարմին հաշվետվություն ներկայացնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

4.2. Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է սույն թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Եզրաչափիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրի 1-ին կետում նշված նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցների դադարեցումը:

8.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Նպաստ տրամադրող	**Նպաստ ստացող**
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն 900011474518	«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ք. Երևան, Փիրումյանների 9 Հ/Հ 16043032235600 ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ ՀՎՀՀ 00129631
---------- (ստորագրություն) Կ.Տ	---------- (ստորագրություն) Կ.Տ

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են որոշմամբ նախատեսված՝ ծրագրով սահմանված վճարուների կատարման եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ ամսական կտրվածքով:

4.2. Յուրաքանչյուր ամիս գումարը Կազմակերպության հաշվին է փոխանցվում նախորդ ամսվա փոխանցված գումարի վերաբերյալ Պետական մարմին հաշվետվություն ներկայացնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3.Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, Կազմակերպությունը միջոցառոմների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետ ծագած և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական

մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարություն

ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8

ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական
գանձապետարանի գործառնական վարչություն

900011474500

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ

ք. Երևան, Փիրումյանների 9

Հ/Հ 16043032235600

ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ

ՀՎՀՀ 00129631

(ստորագրություն)

Կ.Տ

մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարություն

ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8

ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական
գանձապետարանի գործառնական վարչություն

900011474500

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ

ք. Երևան, Փիրումյանների 9

Հ/Հ 16043032235600

ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ

ՀՎՀՀ 00129631

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 1
2020 թ. Հունվարի 14 -ին կնքված N _____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Վերապատ-րաստման ծառայություններ	1) դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մեջ դատավորի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորում, մասնագիտական գիտելիքների ընդլայնում 2) դատավորների, դատախազների, ինչպես նաև դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկ-ված՝ Ակադեմիայի շրջանավարտ անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների, դատական կարգադրիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործում 3) դատավորների, դատախազների, դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կրթական ծրագրերի աստիճանական մերձեցումը, համատեղ կրթական ծրագրերի իրականացում:	- որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների հավակ-նորդների, դատախազների թեկնածություն-ների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման կազմակերպում և անցկացում, - դատավորների, դատախազների, դատավորների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց վերապատրաստում, - դատական ծառայողների, դատախա-զության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչ-ների վերապատրաստում - դատավորների, դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցման կազմակերպում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով:	-ունկնդիրներին նեղ մասնագիտական աշխատանքի իրականացման համար գործնական հմտությունների ձևավորում, մասնագիտական գիտելիքների ընդլայնում, - աշխատանքային ունակությունների շարունակական կատարելագործում, -դատական իշխանության, դատախազության ունկնդիրների կրթական ծրագրերի աստիճանական մերձեցում, համատեղ կրթական ծրագրերի իրականացում, -դատավորի, դատախազի, կերպարի ձևավորում, ինչը ենթադրում է ոչ միայն մասնագիտական գիտելիքների և հմտությունների, այլև դատավորի, դատախազի, աշխատանքի իրականացման համար հարակից գիտելիքների և հմտությունների տրամադրում:	2020 թվականի դեկտեմբերի 31	237537700
Ընդամենը						

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
900011474500

_____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Փիրումյանների 9
Հ/Հ 16043032235600
ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 00129631

_____
(ստորագրություն)
Կ.Տ